ՀԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ ԼՈՐՈՒՏԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ

Թումանյանի շրջանի Լորուտ գյուղը գտնվում է Մոտկորի անտառապատ լեռների գրկում՝ ծովի մակերևույթից 1300—1600 մ բարձրության վրա։ Չնայած այն հանգամանքին, որ Հայաստանում հնագիտական առաջին ուսումնասիրությունները կապված են Լոռիի հետ (Թումանյանի շրջան, Որնակ գյուղ), սակայն Լորուտը նոր է դառնում հնագիտական ուսումնասիրության ասպարեզ։ 1979 թ. օգոստոսին Լորուտ գյուղի տարածքում և շրջակայքում հայտնաբերեցինք բրոնզեդարյան տարբեր ժամանակների, երկաթի լայն յուրացման շրջանի և միջնադարյան մի շարք հուշարձաններ։ Վաղ բրոնզեդարյան խեցեղենի բեկորներ հայտնաբերվեցին գյուղից 5 կմ հյուսիս-արևելք ընկած «Վարար աղբյուր» կոչվող հանդամասին մերձակա հին բնակատեղիում։ Այստեղ նշմարվում են կլոր և քառանկյունի բնակարանների քարե հիմքեր, առանձին տեղերում՝ նաև շինությունների փլվելուց առաջացած քարակույտեր, իսկ դրանց միջև՝ լայն հրապարակներ։

Բնակատեղիի տարածքում հողային աշխատանքների ժամանակ բնակարանների ավերակների միջից ի հայտ են եկել ռելիեֆ-ներճկված, պարույրաձև վերջավորություններ ունեցող, երկրաչափական բարդ կոմպոզիցիաներով, մի մասը սև, մյուսը՝ մուգ շագանակագույն արտաքինով և գորշ կամ վարդագույն աստառով



Նկ. 1.

խեցեղենի բեկորներ։ Դրանք նման են Շենգավիթի, Կիրովականի, Գառնիի, Լճաշենի կիկլոպյան ամրոցի, Թումանյանի շրջանի Շնող գյուղի և Մեծամորի տարածքից հայտնաբերված մ. թ. ա. III հազարամյակին պատկանող նյութերին։ Նման խեցեղենի բեկորներ են գտնվել Լորուտի ձորից Ահնիձոր տանող ճանապարհի վերակառուցման աշխատանքների ժամանակ բացված դամբարաններից, որտեղ կան նաև մարդու և կենդանիների ոսկորների մնացորդներ։

Թումանյանի շրջանի վաղ բրոնզեդարյան ամենաուշագրավ հուշարձանը Լորուտի ձորի կաթնամշակման գործարանի բակում հայտնաբերվածն է։ Այստեղ 1969 թ. շինարարական աշխատանքների ժամանակ, 4—7 մ խորության վրա, բացվել են ամրողջական կավանոթներ, որոնցից 8-ը այժմ պահվում է Թումանյան

բանավանի միջնակարգ դպրոցի հայրենագիտական թանգարանում (նկ. 1)։ Դրանց մեջ կա նաև գունազարդ կճուճ։

Այս վայրում մեր ստուգողական պեղումների ժամանակ հայտնաբերվեցին չափազանց ուշագրավ նյութեր։ Խեցեղենի մեջ կան վաղ բրոնզեդարյան մշակույթին հատուկ երկրաչափական բարդ կոմպոզիցիաներով, ընդհատվող և անվերջանալի պարույրներով, ռելիեֆ-ներքնակված, կանոնավոր ակոսագծերի մեջ բարդ նախշազարդերով, շագանակագույն, սև, բաց վարդագույն, աղյուսագույն և մետաղափայլ արտաքինով, սև վարդագույն ու դորշ աստառով, մի կողմից փոքր կանթերով, նաև առանց կանթի, լայն բերանով, մասամբ իրանը երեք անցումներով կավանոթների բեկորներ ու ամբողջական կավանոթներ (նկ. 2)։

Ստուգողական պեղումների ժամանակ բացվեցին նաև բրուտագործական մի արհեստանոց և նրա համալիրի մեջ մտնող այլ կառույցներ։ Արհեստանոցը բաղկացած է կավախմորի նախապատրաստման, կավանոթների ձևավորման, թրծման և փայլեցման բաժանմունքներից։ Այնտեղ գտնվեցին մեկուկես տասնյակի հասնող ամբողջական, ավարտուն, կիսավարտ կավանոթներ և մեծ քանակությամբ խեցեղենի բեկորներ, բարե ու ոսկրե աշխատանքային գործիքներ, աղորիքներ, խոշոր և մանր եղջերավոր կենդանիների ոսկորներ, ինչպես նաև սկավառակաձև լավ մշակված քարի մի բեկոր, որը, հավանարար, բրուտագործի դուրգի մաս է։

Մի կավանոթի մեջ կար մ. թ. ա. III հազարամյակով թվագրվող մաքուր կլորահատիկ ցորեն, որն այդ շրջանից մեզ հասած եզակի նմուշ է։

Բրուտագործական արհեստանոցից ոչ հեռու բացվեց 70 սմ տրամագծով, յուրօրինակ կառուցվածքով, կլոր, ներսից եռակողմ ելուստներով մի կրակօջախ։ Օջախի սկավառակի եզրերը նախշազարդված են հաստ, փորագիր, երկրաչափական մոտիվներով (կրկնագիծ եռանկյուններ, ալիքներ, փոքրիկ շրջանակներ կամ դրանցով ստեղծված կոմպոզիցիաներ)։

Լորուտ գյուղի «Վերին Թաղում», անասնաբուծարանների մոտ և դպրոցի նոր շենքի տարածքում հաճախ են բացվում քարարկղյա և սալարկղյա դամբարաններ, որոնցում գտնվում են ուշ բրոնզի և վաղ երկաթի դարերի նյութեր։ Հատկապես ուշագրավ են անասնագոմերի մոտ բացված դամբարանները, որոնցում գտնվել են կավանոթներ, բրոնզե ապարանջաններ, գինդեր, աղաթից, սարդիոնից և դաշտային շաղախից պատրաստված սպիտակ ու կապույտ հուլունքներ։ Դպրոցի նոր շենքի շինարարական աշխատանքների ժամանակ գտնվել են հին կավանոթներ (կարասներ, կճուճներ, թաղարներ և բրեղաններ)։

Այս հուշարձաններից թերևս ամենաուշագրավը «Վերին Թաղիս» դամբարանադաշտն է, որտեղ 1979 թ. պեղել ենք 8 սալարկղյա դամբարան։ Դրանցում հայտնաբերվեցին բրոնզե ապարանջաններ, գոտի, մանյակներ, դաշույն, աղաթից, սարդիոնից և դաշտային շաղախից



Նկ. 2.

պատրաստված հուլունքներ, կավամաններ, պերճանքի առարկաներ և այլն։ Գտածոների մեջ ամենաուշագրավը բրոնզե գոտին է։ Այն պատրաստված է հարթ ու հավասար, 1 մմ հաստությամբ բրոնզե թիթեղից, որի երկարությունը՝ 93, լայնությունը՝ 14 սմ է։ Գոտու երիզներն ընդերկայնակի պատված են եռաերկարությամբ և 3 սմ տրամագծով կլոր, ծակոտկեն, անամեջ, բրոնզե դաշույնի դաստակի (կամ զավազանի) կիսաֆերիկ գլխիկի նմանվող երկու առարկաները, որոնք, թերևս, ննջեցյալի ոտքերը զարդարելու առարկաներ՝ կախիկներ են եղել, մանավանդ, որ դրանց գլխիկները վերջանում են դեպի ներս ներճկված



Նկ. 3.

փաթեթ, անվերջանալի պարույրներով, որոնք, հավանաբար, խորհրդանշում են տիեզերքի անվերջությունը։ Պարանահյուս զարդանախշերի միջև՝ գոտու ողջ մակերեսով, դրվագված է ձիերի, գիշատիչ կենդանիների, ձկների ու թռչունների դինամիկ պատկերներով մի հետաքրքիր տեսարան։ Ինչպես նախշազարդերը, այնպես էլ բոլոր պատկերներն արված են մեծ վարպետությամբ՝ սուր, բարակ, փորագրիչի օգնությամբ։ Միայն զարմանալ կարելի է դրվագող վարպետի հմտության, պատկերների ռեալիստական ընկալման, չափի զգացման, անատոմիական գիտելիքների և ամենից կարևորը՝ բարդ կոմպոզիցիա ստեղծելու բացառիկ կարողության վրա։ Գոտին դրվագող վարպետը, հավանաբար, պատկերել է հուժկու ուժերի մի անհավասար պայքար՝ կենդանական ու բուսական աշխարհի կենաց ուժերի գոյամարտ խավարի դեմ։ Պակաս հետաքրքրական չեն նույն դամբարանից (ննջեցյալի սրունքների ոսկորների վրայից) հայտնաբերված 4 սմ ատամնաձև ելուստներով, որոնց արանքում պահպանվել էր կաշվե բարակ փոկի մնացորդ։ Այս դամբարանադաշտում 1976 թ. պատահմամբ գտնվել են նաև երկաթե դաշույն, մանյակ և այլ առարկաներ։

Լորուտի շրջակայքում հին խաչքարեր կան Ահնիձոր և Աթան գյուղերի մոտ։ Միջնադարյան հուշարձանների շարքում ուշադրության են արժանի Մոտկոր «քաղաքի» ավերակները։ Մոտկորը գտնվում է Լորուտից 3 կմ հյուսիս-արևմուտք՝ Փողերասարի տակ։ Այնտեղ կան բազմաթիվ շինությունների ավերակներ, տեղ-տեղ պահպանվել են ահռելի քարերով շարված պատերի մնացորդներ, որոնք պատված են անտառով։ Մոտկորի ավերակներում կան 10-ից ավելի նուրբ նախշազարդերով խաչքարեր (նկ. 3)։

Մոտկորից ոչ հեռու՝ Լորուտ գետակի վրա, կան միջնադարյան երկու քարաշեն կամուրջներ, որոնցից մեկը երկթռիչք է՝ հարմարեցված երկու ձորակների վրա։ Կամրջի հիմնապատե-

ը պատրաստված են 4 մ լայնություն և 5—6 մ բարձրություն ունեցող քարե սյուներից։ Մյուս կամուրջը, որը նախորդից մոտ 1 կմ հեռավորության վրա է գտնվում, կոչվում է Սոքի կամուրջ։ Այն կառուցված է Սոք գյուղաքաղաքը տանող ճանապարհի վրա, իսկ Սոքի ավերակները գտնվում են Մոտկորից 7 կմ հարավարևելք՝ բարձր սարերի մեջ, որից ոչ հեռու կա միջնադարյան կիսաժայռափոր մի վանք։

Մոտկորի ավերակները և նրա շրջակայքի միջնադարյան մյուս հուշարձանները կարոտ են հատուկ ուսումնասիրության։

Այսպիսով, Լորուտ գյուղի տարածքում և շրջակայքում կան մ. թ. ա. III հազարամյակից մինչև ուշ միջնադարը ներառող բազմաթիվ հուշարձաններ, որոնց սպառիչ ուսումնասիրությունը կհարստացնի Լոռվա մշակութային օջախի մասին մեր ունեցած պատկերացումները։

ՎԱՐՇԱՄ ԱՎԵՏՅԱՆ